ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 04(232)
մայիս - 2021

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ ԱՐՊՀ-ՈՒՄ



Յուրաքանչյուր տարի Մայիսյան եռատոնին ընդառաջ հանրապետության կրթական հաստատություններում կազմակերպվում են արիության դասեր: Չխախտելով ավանդույթը՝ մայիսի 7-ին Արցախի մայր բուհում կազմակերպվել է արիության դաս՝ «Հարատև պայքար հանուն ապագայի» թեմայով, որը վարել են ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը և ՊԲ հրամանատարի ԲՀԱ գծով տեղակալ, գնդապետ Նորայր Մկրտչյանը:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգել են հանուն հայրենիքի պատերազմներում նահատակված քաջորդիների հիշատակը: Ռեկտոր Արմեն Սարգսյանն իր խոսքում նշել է, որ, ցավոք, 44-օրյա պատերազմի պատճառով կորուստներ է ունեցել նաև մայր բուհը. հավերժի ճամփորդ է դարձել 24 ուսանող, անհայտ կորած է համարվում երկու ուսանող: Բուհում նրանց հիշատակին տեղադրվել է հուշատախտակ, վերահրատարակության են պատրաստում «Անկախության նվիրյալները» գիրքը, որտեղ տեղ են գտնելու ԱրՊՀ այն ուսանողների կյանքն ու մարտական ուղին, ովքեր հավերժի ճամփան են բռնել Արցախյան առաջին, ապրիլյան և 44-օրյա պատերազմների ընթացքում:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանն իր խոսքում նշել է, որ 44-օրյա պատերազմից հետո պատմական ծանր ժամանակներում ենք ապրում, բայց չպետք է վհատվել, պարտավոր ենք դիմակայել դժվարություններին, պատմության սխալներից դասեր քաղել ու երբեք չհրաժարվել փառքի մայիսից, որը պատգամում է վերածնվել:

«Մեր հոգում ամրագրված է հարատևելու կամքը: Մենք վստահաբար վերածնվելու ենք: Սա է մեզ պատգամում մեր փառավոր մայիսը: Մայիսյան հաղթանակները մեզ պատգամում են հասնելու նրան, հանուն որի ընկան մեր տղաները: Պետք է կարողանանք զսպել կորստի ցավը և առաջ գնանք, դուրս գանք ես-ի նեղ անձնական սահմաններից և գնալ դեպի մենք-ը՝ ամուր պահելով մեր ինքնությունը»,- նշել է նախարարը՝ կարևորելով պատմությունից դասեր քաղելը, սխալները շտկելը և կրթական համակարգի ու մտավորականության դերը համազգային նպատակներին հասնելու գործում:

Նախարարը խոսել է նաև պատերազմի հետևանքով կորսված հուշարձանների, աշխարհի ամենատես աչքի առջև դրանց ոչնչացման և նախարարության կողմից մշակութային ցեղասպանությունը կանխելուն ուղղված աշխատանքների մասին:

ՊԲ հրամանատարի ԲՀԱ գծով տեղակալ, գնդապետ Նորայր Մկրտչյանը ներկայացրել է մայիսյան հաղթանակների՝ Ավարայրից մինչև Շուշիի ազատագրում, պատմական նշանակությունը, խորհուրդը, Արցախյան 44-օրյա պատերազմում հայ զինվորի ցուցաբերած սխրանքն ու դրվագներ հայոց բանակի մղած արյունալի մարտերից:

➥ 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Մայիսի 18-ին հրավիրվել է տնտեսագիտական ֆակուլտետի մեծ խորհրդի նիստ, որի ընթացքում ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը ներկայացրել է 2019-2020 ուսումնական տարում ֆակուլտետի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը, և տեղի է ունեցել ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով պարգևատրության արարողություն:



Դեկան Ռ. Մանգասարյանը ներկայացրել է հաշվետու տարում ֆակուլտետի կառուցվածքը և նրա կառավարման համակարգը, կրթական գործունեության կազմակերպումը, ուսումնամեթոդական գործունեությունը: Ֆակուլտետի առաքելությունը աշխատանքի շուկայի պահանջարկին համահունչ, մասնագիտական գիտելիքներով և հմտություններով մրցունակ, համամարդկային արժեքները ճանաչող մասնագետների պատրաստումն է:

«Ֆակուլտետի կրթական գործունեությունը պետք է համահունչ լինի փոփոխվող միջավայրի առաջարկող պայմաններին: Այդ առումով, ֆակուլտետի ամբիոնները պարբերաբար վերանայում և արդիականացնում են դասավանդվող առարկաների ուսումնական ծրագրերը»,-նշել է դեկանը՝ հավելելով, որ հաշվետու տարում ֆակուլտետում հետևողական աշխատանքներ են իրականացվել ուսումնական գործընթացի բարելավման, գիտահետազոտական գործունեության ընդլայնման, ուսանողական միջոցառումների ակտիվացման ուղղություններով: Ֆակուլտետում ներդրված է հեռավար ուսուցման հարթակը՝ համապատասխան նյութերի առկայությամբ, որի գործարկմամբ նոր առաջընթաց է արձանագրվել առցանց ուսուցման ուղղությամբ:

Ֆակուլտետի որպես ուժեղ կողմեր դեկանը առանձնացրել է բուհ-գործատու համագործակցության ամրապնդումը, հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման և կրթական համակարգին առնչվող հիմնախնդիրների շուրջ գիտահետազոտական աշխատանքների ծավալումը, գիտահետազոտական միջոցառումները, տնտեսության իրական հատվածից փորձառու և անհրաժեշտ գիտական կարողություններով մասնագետների ներգրավումը ուսումնական գործընթացում և այլն: Դեկանի հաշվետվությունը իրենց ելույթներով բարձր են գնահատել ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը, տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Շուշան Ասրյանը, ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Նարինե Մելքումյանը, տ.գ.թ., դոցենտ Իրինա Իշխանյանը, ՈՒԽ ներկայացուցիչ Հարութ Գևորգյանը: ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել դեկան Ռ. Մանգասարյանին և ֆակուլտետի համակազմին՝ արդյունավետ իրականացրած աշխատանքի համար և համալսարանի զարգացման գործում ներդրում ունեցած ֆակուլտետի մի խումբ դասախոսների ու աշխատակիցների պարգևատրել ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով:



«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝
«ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զարինե Սառաջյան

Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:

Այցելի՛ր asu.am կայք:

www.asu.am

1 ➥ «44-օրյա պատերազմի ընթացքում ծավալվել են արյունալի մարտեր ամեն մի թիզ հողի համար, և մեր զինվորները ցույց են տվել հերոսական օրինակներ: Այս տարի Եռատոնը դիմավորում ենք 44-օրյա պատերազմից հետո ստեղծված նոր իրողություններում, սակայն այն չի դադարում Եռատոն լինելուց: Այսօր Արցախը վիրավոր է, բայց անպարտ»,- նշել է Ն. Մկրտչյանը՝ հավելելով, որ ժամանակակից մարտերում իշխում է ինտելեկտը, հետևաբար կարևոր է ուսանողության լավ սովորելը և հայրենիքի համար պիտանի մարդ դառնալը:



«Ավարայրից Սարդարապատ, Մեծ Հայրենականից Շուշի հայ ժողովրդի ունեցած ձեռքբերումներն ու հաղթանակները վկայում են, որ դրանք արդյունք էին ոչ միայն արիության, այլ նաև՝ ներդաշնակ միաբանության»,- ընդգծել է Ն. Մկրտչյանը:

Շնորհակալություն հայտնելով բանախոսներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ՊԲ-ին է նվիրել ԱրՊՀ գիտխորհրդի կողմից տպագրված «Արցախի ժողովրդագիտությունը» աշխատության հատորները:

ՀԻՇԱՏԱԿԻ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄԻ ՀՈՒՇ-ԵՐԵԿՈ



Արցախյան 44- օրյա պատերազմի հետևանքով հավերժի ճամփորդ են դարձել ԱրՊՀ քսանչորս ուսանողներ: Պատմության և իրավագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ տեղի ունեցած հուշ-երեկոն հիշատակի և խոնարհումի խնկարկում էր ֆակուլտետի զոհված ուսանողներ Արեն Ասրյանի և էդգար Դոլուխանյանի անմար հիշատակին:

Նրանք գրիչը փոխարինեցին զենքով պատերազմի հենց առաջին օրերից: Միջոցառմանը ներկա էին դասախոսներ, ուսանողներ, անմահացած ուսանողների հարազատներ: Ֆակուլտետի ուսանողները հանդես են եկել ասմունքով, երաժշտական կատարումներով, ներկայացրել հերոսներ Արենի ու էդգարի կյանքն ու մարտական ուղին՝ իրենց ելույթներում ընդգծելով անմահացած ուսանողների սխրանքն ու անմնացորդ նվիրումը հայրենիքին:

Ֆակուլտետի դեկան Արմինե Խաչատրյանն իր ելույթում երախտագիտության խոսք է հղել հավերժի ճամփորդ դարձած ուսանողների հարազատներին՝ նշելով. «Շնորհակալություն Ձեզ՝ հերոսներ ծնելու, սնելու և դաստիարակելու համար: Խոնարհվում ենք Ձեր առջև, հերոսածին մայրեր: Մեր անմահացած ուսանողները չխնայեցին իրենց կյանքը հանուն կյանքի: Նրանք զոհվեցին՝ ապրողներին հրամայելով ապրել ու շենացնել հայրենիքը, ապրել նաև իրենց փոխարեն: Ոչ մի պարտություն դեռ ավարտ չէ: Մենք դեռ ապրելու ենք և շենացնելու ենք Արցախը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Մայիսի 13-ին հրավիրվել է բանասիրական ֆակուլտետի մեծ խորհրդի նիստ, որի ընթացքում բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Մարգարյանը ներկայացրել է 2019-2020 ուսումնական տարում ֆակուլտետի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը, և տեղի է ունեցել ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով պարգևատրության արարողություն:



Դեկան Լ. Մարգարյանը ներկայացրել է հաշվետու տարում ֆակուլտետի կառուցվածքը և նրա կառավարման համակարգը, կրթական գործունեության կազմակերպումը, ուսումնամեթոդական գործունեությունը, ուսանողների կատարած գիտական աշխատանքը, դաստիարակչական ու կրթական ժամանցը, համագործակցությունը և ինքնավերլուծությունը՝ ուժեղ ու թույլ կողմերով:

2019-2020 ուսումնական տարում ֆակուլտետում ուսումնագիտական գործունեությունն իրականացվել է 4 ամբիոններում: Ֆակուլտետի 2019-2020 ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել էր 43595 ակադեմիական ժամ, որը բաշխվել էր 4 ամբիոնների միջև:

Ուսումնամեթոդական գործունեությունը բնութագրելով՝ Լ. Մարգարյանը նշել է. «Հաշվետու տարին կարող ենք բնութագրել կրթության որակի բարելավմանն ուղղված աշխատանքների համակարգման տարի՝ մեկնարկին, իսկ երկրորդ կիսամյակից՝ նոր մարտահրավերին՝ համավարակին, արագ արձագանքելու և ուսուցման գործընթացը հնարավորինս լիարժեք կազմակերպելու հնարավորությունների համակարգման ժամանակահատված: Երկրորդ կիսամյակում շրջվեց ուսումնական գործընթացը, և ստիպված էինք հեռավար կարգով ուսուցումը կազմակերպելու: Այն հնարավորինս լիարժեք իրականացնելու հնարավորություն ունեցանք՝ շնորհիվ ռեկտորատի կողմից մեկշաբաթյա պարբերականությամբ, ըստ խնդիրների, ընդունվող որոշումների: Ինչպես բուհի բոլոր ստորաբաժանումները, նաև բանասիրականն ուներ իր դասախոսական անձնակազմի կողմից կազմված էլեկտրոնային դասախոսությունների բանկը և բոլոր դասընթացների առարկայական նկարագրերը»:

Դեկանը ներկայացրել է նաև կադրային ներուժի զարգացման ուղղությամբ արձանագրված ձեռքբերումները, տարվա ընթացքում իրականացված բազմաբնույթ այն միջոցառումները, որոնք միտված են եղել կրթադաստիարակչական, գիտահետազոտական, ուսումնական գործընթացի բարելավմանը, միջբուհական, բուհ-դպրոց կապերի ամրապնդմանը, հասարակությանը կրթագիտական արժեքներ փոխանցելուն և այլ առանցքային ոլորտների:

Լ. Մարգարյանը որպես ինքնավերլուծության ուժեղ կողմեր առանձնացրել է ֆակուլտետում լիարժեք ներդրված էլեկտրոնային ուսուցման հարթակը և այդ ռեսուրսներից օգտվելու ունակ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական համակազմ ունենալը, հետևողականորեն իրականացվող աշխատանքները՝ ուղղված ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, ֆակուլտետի բոլոր ամբիոններում մասնագիտական կրթական ծրագրերը մշակված ու ներդրված լինելու փաստը, համաչափ զարգացման ու լավ փորձի տարածման հարթակի ստեղծված լինելը: Խոսելով թույլ կողմերի մասին՝ ընդգծել է միջամբիոնային փոխգործակցության ակտիվացման անհրաժեշտությունը և օտար լեզվով դասընթացների թվի աճի ապահովումը այլ կրթական ծրագրերի շրջանակներում:

Հաշվետվության շուրջ ելույթներ են ունեցել ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը, դասախոսներ Ս. Խանյանը, Զ. Բալայանը, Ռ. Պետրոսյանը, ովքեր բարձր են գնահատել 2019-2020 ուստարում ֆակուլտետի կատարած աշխատանքը: Հաշվետվությունը գնահատվել է բավարար:

Ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել ֆակուլտետի համակազմին ու դեկան Լ. Մարգարյանին՝ արդյունավետ իրականացրած աշխատանքի համար և ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով պարգևատրել ֆակուլտետի աշխատանքներում ակտիվություն ցուցաբերած, համալսարանի զարգացման գործում ավանդ ունեցած դասախոսների և աշխատակիցների:

ԱրՊՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ 2-ՐԴ ՓՈՒԼԻ ԸՆԹԱՑԻԿ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

ԱրՊՀ-ում կազմակերպվել են գարնանային կիսամյակի 2-րդ փուլի ընթացիկ ստուգումները, որոնք մեկնարկել էին մայիսի 17-ից և տևել մինչև մայիսի 28-ը:



Ուսումնական գործընթացի վերահսկման պատասխանատու Գոհար Գասպարյանի հավաստմամբ՝ ուսանողները հիմնականում գոհ են քննությունների ընթացքից: Նրանք իրազեկված են իրենց իրավունքների և պարտականությունների, համապատասխան կանոնակարգերի մասին, այդ թվում նաև՝ քննասենյակի կարգապահական կանոններին: ԱրՊՀ ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի աշխատակիցները, նախքան քննությունների մեկնարկը, ուսանողներին տեղեկացնում են քննությունների անցկացման կարգի, ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին: Քննատոմսերի բովանդակությունը որակը ևս իրավասու մարմինների ուշադրության կենտրոնում է: Ուսումնական գծով պրոռեկտորի անմիջական վերահսկողությամբ պարբերաբար քարմացվում են թեստերը, ենթարկվում փորձաքննության:

«Ստուգումներն անցել են բնականոն հունով, առանց միջադեպերի, և էական խնդիրներ չեն արձանագրվել»,-նշել է ՈւԳՎ բաժնի պետ Գոհար Գասպարյանը:

ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԸ ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԴՐՍԵՎՈՐԵԼ ԵՆ ԴԱՏԱԽԱԳԻ ՄԻՋՈՑՈՎ



Մայիսի 20-ին պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտի պաշտոնակատար Գրետա Արզումանյանի նախաձեռնությամբ և Փաստաբանական պալատի անդամ, փաստաբան, իրավունքի ամբիոնի դասախոս Ռոման Երիցյանի համակարգմամբ կազմակերպվել է «Զրպարտությունը և վիրավորանքը» թեմայով դատախաղ: Դատախաղը անց է կացվել «Իրավագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսումնական պլանում ներառված «Քաղաքացիական դատավարություն» դասընթացի շրջանակներում: Միջոցառմանը ներկա էին ԱրՊՀ ռեկտոր Ա. Սարգսյանը, ԱԺ դատական համակարգի, դատախազության, Փաստաբանական պալատի ներկայացուցիչներ, իրավունքի ամբիոնից դասախոսներ և ուսանողներ:

«Կայացած դատախաղը դատավարության բնագավառում ուսանողների ստացած գիտելիքների ամփոփումն էր: Կարծում եմ՝ ուսանողներն այսօր իրենց ցուցաբերեցին դրական հատկանիշներով»,-նշել է իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Գ.Արզումանյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆԻ ՀԵՏ

ԱրՊՀ-ում մեկնարկած «Արցախ. ներկան և ապագան» ծրագրի շրջանակում մայիսի 4-ին տեղի է ունեցել հանդիպում ԱԺ արտաքին գործերի նախարար, Արցախի պահպանողական կուսակցության նախագահ, քաղաքագետ, պատմական գիտությունների դոկտոր Դավիթ Բաբայանի հետ, որին ներկա էին պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:



ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ողջունել և շնորհակալություն է հայտնել Դավիթ Բաբայանին՝ ԱրՊՀ զարգացման գործում ունեցած զգալի ավանդի համար և ռեկտորատի որոշմամբ նրան պարգևատրել ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով ու «Արցախի ժողովրդագիտությունը» աշխատության հատորներով:

Դավիթ Բաբայանը հանդես է եկել բանախոսությամբ՝ ներկայացնելով երկրի առջև ծառացած ոլորտային խնդիրները, դրանց լուծման ուղիները, աշխարհաքաղաքական զարգացումները, մարտահրավերներն ու դրանց դիմակայելու ուղիները:

Կարևորելով երիտասարդության ներուժը՝ նա նշել է, որ յուրաքանչյուրն իր քայլերում ու գործողություններում պետք է լինի դիվանագետ և հաշվի առնի, որ հակառակորդը ուշի ուշով հետևում է մեզ:

Խոսելով արտաքին քաղաքականության ուղղությամբ տարվող աշխատանքների առաջնահերթություններից՝ քաղաքագետը ընդգծում է, որ շարունակվում և շարունակվելու է օրակարգային մնալ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հարցը:

Պատերազմի հետևանքով ստեղծված խնդիրները հաղթահարելու և վերականգնվելու հարցում Դ. Բաբայանը կարևորում է պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը:

«Մեր պատմության մեջ բացվել է դառը, մղձավանջային մի էջ: Բայց մենք չպիտի վհատվենք ու հուսահատվենք: Մենք կարող ենք ապաքինվել, պետք է կազմակերպվենք, մեր յուրաքանչյուրիս ճիշտ աշխատանքով վերականգնվենք»,-նշել է նա՝ կարևորելով Արցախի սուբյեկտայնության պահպանման անհրաժեշտությունը, որի լինելիության համար նա ընդգծում է երկու կարևոր գործոն՝ Սփյուռքը և Հայաստանը,- «Պետք է Սփյուռքում և Հայաստանում շարունակվի Արցախը որպես սրբություն ընկալվելը»:

Քաղաքագետը համոզմունք է հայտնում նաև, որ Արցախի լինելիության համար առկա են օբյեկտիվ հնարավորություններ: Այս համատեքստում նա մատնանշում է աշխարհաքաղաքական զարգացումներում տարածաշրջանում ուժերի հավասարակշռության պահպանման գործոնը և Արցախում հայկականության առկայությունը:

Խոսելով անվտանգային հարցերից՝ Դ. Բաբայանը շեշտել է Ռուսաստանի, ռուս խաղաղապահների դերը՝ որպես անվտանգության երաշխավոր՝ նման պարագայում պատերազմի հավանականությունը համարելով քիչ:

«Պետք է բարձր պահենք մեր ազգային դիմադրողականությունը, ուժեղ պահենք մեր արժեհամակարգը: Ցանկացած բարդություն նաև հնարավորություններ է ստեղծում: Պետք է կարողանալ այդ հնարավորությունները ճիշտ և խելացի օգտագործել»,-նշել է նա՝ կարևորելով գրագետ և կիրթ հասարակություն ունենալու անհրաժեշտությունը:

ԱՐՊՀ Է ԱՅՑԵԼԵԼ «ԱՎՐՈՐԱ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՀԻՄՆԱԴԻՐ, ԳՈՐԾԱՐԱՐ, ԲԱՐԵՐԱՐ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Մայիսի 5-ին Արցախի պետական համալսարան է այցելել «Ավրորա» մարդասիրական կազմակերպության համահիմնադիր, գործարար, բարերար Ռուբեն Վարդանյանը և հանդիպել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ:



Հանդիպման ընթացքում Ռուբեն Վարդանյանը ներկայացրել է «Ավրորա» մարդասիրական կազմակերպության առաքելությունը, նպատակը, Արցախում իրականացված և իրականացվելիք ծրագրերը: Նա ներկայացրել է նաև The FUTURE ARMENIAN (ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ) հանրային նախաձեռնությունը, որի նպատակն է ստեղծել Հայաստանի և հայության կայուն զարգացման շուրջ համընդհանուր փոխըմբռնում՝ ուսանողությանը կոչ անելով ներգրավվել նախաձեռնությանը: Ռ.Վարդանյանի խոսքով՝ «Ապագա հայկականը» նախաձեռնությունը չունի քաղաքական նպատակներ և հավակնություններ, այն նպատակ ունի խթանել բաց հանրային դիսկուրս՝ ընտրելու ապագա, որը կոգեշնչի ու կներգրավի Հայաստանի և համայն հայության հավաքական ներուժը:

Նախաձեռնության 15 նպատակների մեջ են մտնում տեսլականի սահմանում, երաշխավորված պետականություն, պատմական պատասխանատվություն, Ազատ Արցախ, Հայաստան-Սփյուռք միասնականություն, ուժեղ սփյուռք, ուժեղ դաշինքներ, հարաճուն, բնակչության աճ, կրթության գերազանցություն, գիտության, տեխնոլոգիաների և ստեղծագործականության գերակայություն, ողջամիտ կառավարում, արդար հասարակություն և նվազեցված անհավասարություններ, ժառանգության պահպանում, փաստերի վրա հիմնված որոշումների կայացում:

Ռ. Վարդանյանը նշել է, որ ծրագրերի իրականացման հիմքում նոր գաղափարներն են, նոր մտածելակերպ դաշտ բերելը:

Խոսելով պատերազմից հետո ստեղծված իրավիճակից՝ նա նշել է բաց թողնված սխալները և մատնանշել այդ սխալները շտկելու ուղիները՝ կրթություն, գիտելիք, աշխատանք, ուժ և ներքին ուժի բացահայտում:

«Այն ներքին մեծ ուժը, որ ունեն արցախցիները, պետք է վերագտնեն, դա է առաջ շարժվելու բանաձևը, և առաջ շարժվեն: Արցախը պիտի մնա հայկական: Եթե կորցնենք Արցախը, կկորցնենք հայ ազգը»,-շեշտել է նա՝ համոզմունք հայտնելով Արցախի լավ ապագայի մասին և իր պատրաստակամությունը հայտնել Արցախին տարբեր ծրագրերով աջակցելու հարցում:

Ռուբեն Վարդանյանը պատասխանել է նաև ներկաների հարցերին:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով բանախոսին՝ Արցախի պետական համալսարան այցելելու և հայրենանվեր գործունեության համար, Ռուբեն Վարդանյանին և «Ավրորա» մարդասիրական կազմակերպության արցախյան ծրագրերի համակարգող, ԱՀ ԿԳՍ նախկին նախարար Նարինե Աղաբալյանին պարգևատրել է ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով:

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԳՊՀ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ



ԱրՊՀ ուսանողները մասնակցել են Գորիսի պետական համալսարանի կողմից մայիսի 11-ից 12-ը կազմակերպված Լեռնահայաստանի հռչակման 100-ամյակին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողովին:

ԱրՊՀ-ից գիտաժողովին մասնակցել են Ասպրամ Ավանեսյանը («Լրագրություն», 2-րդ կուրս), Սոնա Մուսայելյանը, («Հայ գրականության պատմություն», մագիստրատուրա առաջին կուրս), Քրիստինե Կարապետյանը («Ֆինանսներ ըստ ոլորտի», 2-րդ կուրս), Տաթևիկ Ղահրամանյանը («Հայոց լեզու և գրականություն», 2-րդ կուրս), Աշխեն Ասրիյանը («Պատմություն» 3-րդ կուրս), Մարիամ Մինասյանը («Աշխարհագրություն», 3-րդ կուրս), Նինա Քարամյանը («Հոգեբանություն», մագիստրատուրա առաջին կուրս), Գոհար Սարգսյանը («Հայոց լեզու և գրականություն», առաջին կուրս): «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ սովորող մի խումբ ուսանողներ էլ՝ Ինննա Բաղրյանը (ՏՏ-4 կուրս), Հենրիխ Հարությունյանը (ՏՏ-3 կուրս), Մարատ Մարտիրոսյանը (ՏՏ-3 կուրս), Լիլիա Պետրոսյանը (ՏՏ-2 կուրս), Աննա Հարությունյանը, Ալյոնա Հայրապետյանը (ՏՏ-2 կուրս), Արգինե Սարգսյանը, Մարատ Փաշայանը (ՏՏ-3 կուրս), Ռուդոլֆ Բաբայանը (ՏՏ-3 կուրս), Վարդուհի Մնացականյանը (ՏՏ-3 կուրս), Շահինե Մարտրիոսյանը, Լենա Ամիրխանյանը (ԻԿՄ-2 կուրս), գիտաժողովին մասնակցել են առցանց եղանակով:

Մասնակից ուսանողների հավաստմամբ՝ գիտաժողովի մասնախմբերում աշխատանքներն անցել են արդյունավետ, ձեռք են բերել նոր գիտելիքներ ու հմտություններ, ամրապնդվել է միջբուհական ուսանողական գործակցությունը:

«Մեծ ոգևորությամբ ենք վերադարձել Գորիսի պետական համալսարանից՝ տպավորված գիտաժողովի ընձեռած հնարավորություններից: Ուսանողական գիտաժողովները ողջունելի են՝ գիտելիքահեն նպատակաուղղվածությամբ, փորձի փոխանակմամբ և նոր, մնայուն ծանոթությունների ստեղծմամբ»,- իր տպավորություններն է կիսել գիտաժողովի մասնակից Տաթևիկ Ղահրամանյանը:Գիտաժողովի մասնակիցներին շնորհվել են հավաստագրեր:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ

ԱրՊՀ ղեկավարության, ՈւՀՏԱԿ բաժնի և ՈւԽ նախաձեռնությամբ ՊԲ «Ասպարեզ» հրածգարանում համալսարանի հինգ ֆակուլտետների միջև կազմակերպվել է հրածգության մրցույթ: Մրցույթի կազմակերպման նպատակն էր նպաստել ուսանողների շրջանում զենքի ճիշտ օգտագործման, արագ կողմնորոշվելու ունակությունների զարգացմանը:



Ինչպես տեղեկացնում է ԱրՊՀ ՈւՀՏԱԿ բաժինը, մրցույթն անց էր կացվել անհատական և թիմային մրցաշարերով: Թիմային մրցաշարում առաջին մրցանակային տեղը գբաղեցրել է մանկավարժության և սպորտի ֆակուլտետը: Անհատական մրցաշարում առաջին տեղը գբաղեցրել են ուսանողներ Նարեկ Վարդանյանը (Մաթեմատիկա, 2-րդ կուրս), Արմեն Սարգսյանը (Կառավարում, 1-ին կուրս), Գագիկ Խաչատրյանը (Կառավարում, 2-րդ կուրս): Անց է կացվել նաև սիրողական մակարդակի հրածգություն, որին մասնակցել էր շուրջ 65 ուսանող:

7 ➥ Նախարարը «Գերազանց» և «Լավ» գնահատականներ ստացած բոլոր նորաթուխ հոգեբաններին կոնկրետ առաջարկներ է արել՝ կրթության համակարգում նոր բացվող հաստիքներում աշխատանքի ընդունելու վերաբերյալ:

«Լրագրություն» մասնագիտությամբ քննական հանձնաժողովի նախագահ, գրող, լրագրող, հրապարակախոս Վարդգես Բաղրյանը, գոհունակություն հայտնելով ուսանողների պատրաստվածության մակարդակից, կարևորել է համալսարանի դերը ոչ միայն Արցախի գիտակրթական կյանքի զարգացման, այլ նաև Արցախում բնականոն կյանքի, երբեմնի փառքի վերականգնման և հայրինիքի պաշտպանության տեսանկյուններից:

«Պատերազմն, անշուշտ, իր ազդեցությունն է թողել նաև մեր ուսանողության վրա, բայց, վստահաբար կարող եմ ասել, որ դրանից չի տուժել ուսա-





ողների գիտելիքների, իմացության մակարդակը: Դրական եմ տպավորված ուսանողների պատրաստվածության աստիճանից, նրանց ունեցած գիտելիքներից: Համալսարանը կյանքի մի փուլն է, դրան պիտի հաջորդի ինքնակրթության տևական գործընթացը, որն անհրաժեշտ է բանիմաց ու լավ մասնագետ դառնալու համար»,-նշել է Վ. Բաղրյանը՝ կարևորելով լրագրողի մասնագիտությունը՝ տեղեկատվական պատերազմներում, Արցախի մասին օբյեկտիվ տեղեկատվությունն ու ճշմարտությունը միջազգային հանրությանը ներկայացնելու գործում:

«Լրագրություն» մասնագիտության ավարտական կուրսի ուսանողուհի Շողեր Սարգսյանն իր գոհունակությունն է հայտնել ստուգումների ընթացքից՝ այն համարելով նաև յուրահատուկ փորձի ձեռքբերում.«Իմ և ընկերներիս տպավորությունները դրական են: Ստուգումներն անցել են օբյեկտիվ, ուսուցողական և հետաքրքիր»:

ԱՐՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԽԱՉԵՐԹԻՆ

Մայիսի 8-ին Արցախի բոլոր եկեղեցիներում կատարվել է ոգեկոչման կարգ /հոգեհանգիստ/՝ ի հիշատակ Արցախյան ազատամարտում նահատակված հերոսների:

Ոգեկոչման կարգից հետո Ստեփանակերտի Սուրբ Աստվածամոր Հովանու Մայր տաճարից մեկնարկել է խաչերթ՝ Հայոց բանակի պահապան Աշոտ Երկաթ Սուրբ խաչի և ՊԲ հովանավոր Սբ Գրիգորիսի Խաչվառի առաջնորդությամբ դեպի հուշահամալիր: ԱրՊՀ դասախոսներն ու ուսանողները, ռեկտոր Արմեն Սարգսյանի գլխավորությամբ, մասնակցել են խաչերթին և ծաղիկներ խոնարհել



հուշահամալիրում՝ հարգանքի տուրք մատուցելով մեր անմահացած քաջորդիների հիշատակին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱԿ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ՀԵՏ

ԱրՊՀ-ում մեկնարկած «Արցախ. ներկա և ապագա» ծրագրի շրջանակում մայիսի 6-ին տեղի է ունեցել հանդիպում ԱՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արտակ Բեգլարյանի հետ, որի մասնակցում էին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Արտակ Բեգլարյանին ԱՀ ՄԻՊ-ի և ներկայիս պաշտոնում իրականացրած արդյունավետ գործունեության, ինչպես նաև ԱրՊՀ զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար՝ պարգևատրելով նրան ԱրՊՀ հիմնադրման 50-ամյակի հուշամեդալով ու «Արցախի ժողովրդագիտությունը» աշխատության հատորներով:

Արտակ Բեգլարյանը հանդես է եկել բանախոսությամբ՝ ներկայացնելով պատերազմի հետևանքով երկրում ստեղծված իրավիճակը, խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ իրականացվող կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը, տարածաշրջանային զարգացումները, մարտահրավերներն ու դրանց դիմակայելու ուղիները:

«Արցախի ապագան կախված է մեր այստեղ ապրելով: Ինչքան շատ հայ ապրի Արցախում, այնքան անվտանգային առումով մեծ կլինեն երաշխիքները»,-ասել է Ա.Բեգլարյանը և համոզմունք հայտնել, որ խելացի ու նպատակային աշխատանքի դեպքում հնարավոր է հասնել ազգային նպատակներին՝ վերադարձնելով մեր հայրենիքի կորսված մասը:

Ա.Բեգլարյանի խոսքով՝ հետպատերազմյան շրջանի առաջին մեկ տարին վերականգնման փուլ է, որի ընթացքում առաջնահերթություն է բնակչության կենսական առաջին անհրաժեշտ պայմանների վերականգնումը, որին պետք է հաջորդի զարգացման փուլը:

«Պետք է սոցիալական աջակցության տրամաբանությունը փոխվի՝ մարդկանց հնարավորություն տալով եկամուտ վաստակելու, դրանով իսկ զարգանալու և իրենց աշխատանքով նպաստելու երկրի, հասարակության զարգացմանը»,-ասել է նա:

Անվտանգային խնդիրներից խոսելով՝ բանախոսն ընդգծել է, որ այդ առումով դրական միտում-



ներ կան, և այս համատեքստում կարևորել է ՌԴ կողմից տարածաշրջանում կայուն և երկարաժամկետ խաղաղության ապահովումը, որի ընթացքում պետք է կարողանանք ուժերը վերականգնել և խելացի աշխատանքով հասնել ազգային նպատակներին:

Փորձագիտական տեսանկյունից դիտարկելով այս օրերին շատերին հուզող հարցը, թե հինգ տարի հետո ինչ կլինի, Ա. Բեգլարյանի կանխատեսմամբ ռուսական խաղաղապահ զորակազմը կշարունակի մնալ Արցախում՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ:

Ա. Բեգլարյանը խոսել է նաև տնտեսության, կրթական համակարգի, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման անհրաժեշտության մասին՝ բոլոր ծրագրերի հիմքում կարևորելով նախաձեռնողականությունը, մարդկանց մոտիվացիան:

Նրա համոզմամբ՝ այսօրվա պայմաններում բավարար հնարավորություններ կան նույնիսկ ինքնուրույն զարգանալու, միայն թե ցանկություն լինի, հետևողական ու խելացի աշխատանքի արդյունքում հնարավոր է հասնել հաջողությունների:

«Մարդը միշտ պետք է մոտիվացիա ունենա նոր բան սովորելու համար: Յուրաքանչյուր անհատ պետք է գիտակցի, որ իր աշխատանքով պետք է կարողանա օգտակար լինել իր ընտանիքին, իր հասարակությանը, իր երկրին»,-ասել է Արտակ Բեգլարյանը:

Բանախոսը պատասխանել է ներկաների հարցերին, նաև պատրաստակամությամբ ընդունել ուսանողության հետ հանդիպելու և դասախոսությամբ հանդես գալու առաջարկը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՊՀ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ



Մայիսի 11-ին ԱրՊՀ է այցելել Հայաստանի հանրային հեռուստաընկերության պատվիրակությունը՝ գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին հանրային հեռուստաընկերության գլխավոր պրոդյուսեր Տիգրան Վիրաբյանը, հեռուստաընկերության մեդիաակադեմիայի ղեկավար Լենա Մինասյանը և հանրության հետ կապերի ծառայության ղեկավար Աննա Օհանյանը: Այցի ընթացքում «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի և «Արցախի Պետական Համալսարան» ՊՈԱԿ-ի միջև կնքվել է ռազմավարական համագործակցության մասին հուշագիր:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը կարևորել է հուշագրի ստորագրումն ու Հայաստանի հանրային հեռուստաընկերության հետ համագործակցությունը՝ նշելով, որ համագործակցության շրջանակում հնարավոր կդառնա ոչ ֆորմալ կրթության ձևաչափով կարճաժամկետ ծրագրերով թողարկել կադրեր լրագրության նեղ մասնագիտացման ոլորտում:

Հայաստանի հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանն, իր հերթին կարևորելով հուշագրի կնքումը, նշել է, որ այն գործնական-կրթական ծրագրերի մեկնարկ է, որի արդյունքում պատրաստված լավագույն կադրերը աշխատանքի առաջարկներ կստանան տարբեր հեռուստաընկերությունների կողմից: Նրա խոսքով՝ հուշագիրը նպատակ ունի ամրապնդել կապերը կրթության ոլորտում, նպաստել որակյալ մասնագետներ պատրաստելուն և առաջիկայում արդեն կհայտարարվի ընդունելություն:

Ըստ համագործացության հուշագրի՝ կողմերը կիրականացնեն ռազմավարական գործընկերություն և երկարաժամկետ համագործակցություն, որի նպատակներն են հեռուստաընկերության կողմից ԱրՊՀ ուսանողներին և երիտասարդ փորձագետներին աջակցությունը և տեսական գիտելիքների գործնականում կիրառելու հնարավորության ապահովումը, հեռուստաընկերության հմուտ մասնագետների կողմից ուսանողներին խորհրդատվության տրամադրումը, պետության՝ մշակույթի ոլորտի զարգացման, առաջխաղացման նկատառումներից ելնելով՝ կողմերի համատեղ կարողություններով և բարձր պատրաստակամությամբ երիտասարդ կադրերի վերապատրաստումը:

Համագործակցության հիմնական ուղղությունները լինելու են՝ համատեղ ծրագրերի, դասախոսությունների, վեբ-դասերի, կլոր սեղանների և վարպետության դասերի անցկացումը հեռուստաընկերության՝ համապատասխան որակավորում ունեցող հմուտ մասնագետների, մշակույթի ոլորտի ներկայացուցիչների կողմից, դասընթացների կազմակերպումը Արցախում՝ 2 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ՝ մեկ շաբաթ տևողությամբ, հեռուստաընկերության մասնագետների ներգրավվում դասավանդման, խորհրդատվության, գիտական աշխատանքների վերլուծության, ԱրՊՀ պարբերական հրատարակություններում տպագրվող գիտական հոդվածների, ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսման և այլ գործընթացներում՝ հեռուստաընկերության գործունեությանը վերաբերող հարցերի շուրջ:

Համագործակցությունը ենթադրում է նաև կողմերի՝ ստեղծագործ գաղափարների փոխանակման արդյունքում զանազան հաղորդաշարերի մշակում և արտադրություն՝ գիտական և գործնական հետազոտություններ հեռուստաընկերության գործառույթների լայն շրջանակների ոլորտում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ



Համավարակով և ապա՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմով պայմանավորված դժվարություններով ու մարտահրավերներով լի ուսումնական տարին մոտենում է ավարտին: Ուսումնական տարին ԱրՊՀ-ում ամփոփվում է՝ տարեսկզբին գիտակրթական ուղղությամբ նախանշած ամելիքներն արդեն իրականություն դարձրած:

Հեռավար եղանակով առցանց դասերը 2020 թ. դեկտեմբերի 1-ից փոխարինվեցին պարապմունքների ավանդական ձևով, ինչը Արցախի մայր բուհում կրթության շուրջ նորից հա-մախմբեց դասախոսներին ու ուսանողներին՝ փորձելով պատերազմից խաթարված գիտակրթական կյանքը վերադարձնել բնականոն հուն: Ուսանողների վերադարձը մայր բուհ յուրաքանչյուր ամիս նոր աճ էր արձանագրում, և այսօր արդեն ուսանողական կազմը, գրեթե համալրված, մտնում է քննասեն-յակ՝ ամփոփելու իր ստացած գիտելիքները:

Մայիսի 24-ից մեկնարկել են բակալավրիատի առկա և հեռակա, մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգերի 2020-2021 ուսումնական տարվա ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները և տևել մինչև մայիսի 27-ը:

ԱրՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի տվյալներով՝ 2020-2021 ուստարում ամփոփիչ ատեստավորման ստուգումներին բակալավրիատի առկա ուսուցման համակարգից մասնակցում է 345 ուսանող՝ 20 կրթական ծրագրերից, հեռակա՝ 155 ուսանող՝ 12 կրթական ծրագրերից և մագիստրատուրայի 159 ուսանող՝ 22 կրթական ծրագրերից:

Այս տարի ԱրՊՀ-ն կունենա 659 շրջանավարտ:

ԱրՊՀ ուսումնական գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանի խոսքով՝ գործընթացն ընթանում է բնականոն հունով, արտառոց որևէ խնդիր առայժմ չի արձանագրվել: Գործընթացի արդյունավետությունն ապահովելու, գնահատումն օբյեկտիվ իրականացնելու հարցում նախապես ձեռնարկվել են անհրաժեշտ աշխատանքները:

«Այս տարի ևս, ինչպես նախորդ տարիներին, քննական հանձնաժողովների կազմում և նախագահների պաշտոններում ընդգրկված են տվյալ ոլորտի անվանի մասնագետներ, գործատուներ: Մանկավարժական ուղղվածությամբ մասնագիտություններում ձգտել ենք ընդգրկել դպրոցների տնօրեններին կամ ուսուցիչներին՝ համապատասխան մասնագիտությամբ»,- ասել է Գ. Սահակյանը՝ այս տարվա նորարարական մեթոդներից շեշտելով նաև հանձնաժողովների նախագահների հաշվետվության նոր կարգը, որտեղ կմատնանշվեն ի հայտ եկած խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

«Հոգեբանություն» մասնագիտության քննական հանձնաժողովը ղեկավարել է ԱՀ ԿԳՄՍ նախարար Լ.Ղարախանյանը: Նախարարի համոզմամբ՝ շրջանավարտները ցուցաբերել են պատրաստվածության բարձր մակարդակ և հույս են ներշնչել, որ, ներգրավվելով աշխատաշուկայում, պատվով են կատարելու հոգեբանի մասնագիտության հետ կապված բոլոր գործառույթները:

➥ 8